

Ս. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ 14-15-ՐԴ ԴԱՐԵՐԻ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՄԵՁ  
(ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ)

ԵՐԵՎԱՆ 2009

**Ս. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ 14-15-ՐԴ  
ԴԱՐԵՐԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՄԵՁ  
(ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ)**

**ԵՐԵՎԱՆ  
ՏԻԳՐԱՆ ՄԵԾ  
2009**

ՀՏԴ 809.198.1  
ԳՄԴ 81.23  
Գ 888

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:**

**Պատասխանատու խմբագիր՝  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Լ. Շ. Հովհաննիսյան**

**Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության  
մեջ**

**(Գրիգոր Տաթևացի)**

Գրիգորյան Ս.Ս.

Գ 888 Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ  
(Գրիգոր Տաթևացի). - Եր.: Տիգրան Մեծ, 2009. - 40 էջ:

Աշխատության մեջ ներկայացված են Գրիգոր Տաթևացու մատենագրության նորահայտ բառերը: Սրանց մի մասը ընդգրկված չլինելով Նոր հայկազյան բառարանում՝ երբեմն վկայվում է գրաբարի բառապաշարը ներկայացնող որևէ այլ բառարանում: Սակայն, քանի որ վերջին բառարաններում նշված չեն բառագործածության առաջին աղբյուրները, ուստի դրանք նույնպես բերվում են՝ նշելով բառարանային հղումները:

ԳՄԴ 81.23

ISBN 978-99941-0-298-3

**Գ**րիգոր Տաթևացու՝ երեք տասնյակի մոտեցող աշխատություններում տեղ գտած բառամեկնություններն արժեքավոր են իբրև ժամանակակցի վկայություններ տվյալ նշանակությամբ բառի կիրառության վերաբերյալ: Արդի մեր լեզվամտածողությամբ, օրինակ, *հոգևոր պատերազմ* նշանակում է պայքար հանուն հոգևոր արժեքների, հանուն ինքնության և գաղափարների, իսկ Տաթևացու բացատրության մեջ առկա է դրա միջնադարյան ընկալումը. «Ձի՞նչ է հոգևոր պատերազմն: Նախ՝ որ ընդ մարմինն պատերազմի. երկրորդ՝ ընդ մեղաց. երրորդ՝ փորձութանց սատանայի» (Գրիգոր Տաթևացի, *Մեկնութիւն սաղմոսաց, Մատենադարան, ձեռագիր հ. 5869, էջ 211*): Բառի պատմությունն ուսումնասիրելիս, հետևաբար, կարևոր է իմանալ, թե ինչպես է այն ընկալվել տարբեր ժամանակաշրջաններում, իսկ այդ առումով ժամանակակցի վկայությունն ունի բացառիկ նշանակություն: Ուստի Տաթևացու մեկնությունները մեկ անգամ ևս արժևորվում են, որովհետև համեմատելով հայերենի բառագանձը լավագույնս ներկայացնող բառարանների համապատասխան բացատրությունների հետ՝ ակնհայտ է դառնում, որ դրանք հիմնականում ճիշտ են, այսինքն՝ համընկնում են բառարանային բացատրություններին: Տաթևացու բառամեկնությունները երբեմն նաև ինքնատիպ են, քանի որ վեր են հանում տվյալ բառով նշանակվող երևույթի, հասկացության նոր կողմեր ու հատկանիշներ, և որ կարևոր է, երբեմն էլ պարունակում են պատմական տեղեկություններ: Այսպես օրինակ, եթե Նոր հայկազյան բառարանը «**աղօրհնէք**» բառի համար ունի խիստ սեղմ

բացատրություն (**աղօթք օրհնութեան աղի**), ապա Տաթևացու վկայությունն ըստ էության պատմական տեղեկություն է նաև ծիսակարգի ակունքների վերաբերյալ. «Իսկ վասն տնկականին և **աղօրհնէիցն** սրբոյն յնստոսէ արարեալ, որ չորրորդ եպիսկոպոս էր յառաքելոյն Յակոբայ: Յերկրորդ ամէ սրբոյ Սահակայ մինչև ի ԺԳ ամն նորին կատարեցաւ ի փառս Քրիստոսի, աստուծոյ մերոյ» (**Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պօլիս, 1729թ., էջ 684**):

Մյուս կողմից՝ բառիմաստային տեղաշարժեր են կատարվել հենց Տաթևացու բառապաշարում. դրանց մի մասը դուրս է եկել գործածությունից՝ տեղը զիջելով նույնանշանակ այլ բառերի, մյուս մասը ընդարձակել կամ սեղմել է բառիմաստը՝ թելադրված արտալեզվական պատճառներով:

Նորակազմությունների պատկառելի թիվը և դրանց հմուտ կիրառությունը, անշուշտ, վկայում են հեղինակի հին հայերենի բառագանձի խոր իմացությունը: Պետք է նշել նաև, որ Տաթևացին հետամուտ է եղել բառերի ճիշտ գործածությանը: Թերևս սրանով պետք է բացատրել, որ Չրաչյա Աճառյանը Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց գրքի» նոր բառերը քննելիս հաճախ է դիմում Տաթևացուն ճշտումներ կատարելու համար և պարզում, որ հայերեն բնագրային օրինակում սխալ բառագործածություններ կան («օժանդ»՝ փոխանակ «օժանդակ», «տռփոռ»՝ փոխանակ «տռփողաց» և այլն. տե՛ս **Չր. Աճառեան, Չայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, Կ. Ք. Վենետիկ, 1926, էջ 81**): Խոսելով «բլաթկին» (մահակ) բառի մասին՝ Աճառյանն այն համեմատում է պարսկերեն ձևի հետ և գտնում, որ «ըստ այս լա-

ւագոյն գրչութիւնն է Տաթևացւոյն բալաթիկին ձևը» (**նույնը, էջ 139**):

Տաթևացու բազմաբնույթ բացատրությունների մեջ հաճախ կարելի է տեղեկություններ քաղել բառերի զանազան իմաստների մասին, որոնք տարբեր պատճառներով դուրս են եկել գործածությունից: Այսպես, օրինակ, ըստ Տաթևացու, **սրինգ** բառը հայերենում ունեցել է երեք նշանակություն. «ոմանք զձայն արուեստականցս ասեն և ոմանք զձոնձոյս և ոմանք որ եղեգամբ հնչեն» (**Գր. Տաթևացի, Մեկնութիւն սաղմոսաց, էջ 6ա**), այսինքն՝ բացի գործիքի անվանումից, սրինգ կոչվել է նաև «զձոնձոյս» և սրնգի հնչելը: Վերջինս, ինչպես հայտնի է, կոչվել է սռինչ կամ շռինչ, և որոշ մատենագիրներ, որոնց և ակնարկում է Տաթևացին, նույնացրել են սրինգը և նրա հնչելը՝ սռինչը: Իսկ մյուս բացատրությունը՝ «զձոնձոյս», գտնում ենք միայն Երեմիա Մեղրեցու բառարանում (**Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց (աշխ-մբ՝ Չ. Ամալյանի), Երևան, 1975**):

Եվ այնուամենայնիվ, Տաթևացու բառապաշարը հետաքրքիր է առաջին հերթին՝ պատմական բառարանագրության առումով, որը տանում է դեպի ծագումնաբանական ակունքներ, թույլ է տալիս նոր լույսով տեսնելու սեփական ժողովրդի անցած պատմական ուղին, այսինքն՝ օգնում է եղածը վեր հանելուն կամ երևույթը վերաիմաստավորելուն: Հավանաբար, շատ ու շատ այլ բառեր լեզվի որևէ շերտում, որևէ բարբառում ժամանակին հունդեր են գցել, սակայն բառարաններն այսօր վկայում են այն, ինչը հասցրել է գրավոր հիշատակության արժանանալ: Ուստի պատահական չէր և ոչ անգամ՝ զարմանալի, որ Տաթևացու հիշատակած և ոչ մի բառարանում չվկայված «նշանաքար» բառը,

օրինակ, գտնում ենք «Սասնա ծռեր» էպոսի Կարապետ Մելիք-Օհանջանյանի գրառած հայտնի պատումում, այսինքն՝ ժողովրդի պատմության մասին պատմող ասքն իր մեջ ամբարել և պահել է նաև բառաձևը:

Բառերը մեկնելիս Տաթևացին դիմել է մի շարք եղանակների. մերթ նա իբրև բացատրություն բերում է առարկայի, երևույթի նկարագրությունը. «Ճրագն, այսինքն պատրոյկ և ձէթ և լոյսն վառեալ» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն սաղմոսաց, էջ 78ա), մերթ բառերը բացատրում է՝ խմբավորելով, զուգահեռներ անցկացնելով, ցույց տալով հիմնական տարբերությունները կամ ընդհանրությունները. «Իմաստասեր իմանամք զայնս, որք ըստ արտաքին փիլիսոփայիցն կրթութեան են վարժեալք, որպէս Պղատոն, Արիստոտէլ և այլքն: Եւ իմաստակ կոչին, որք միոյ արիեստի են գլուխ, որպէս քերականութեան, ճարտասանութեան, աստղաբաշխութեան և այլք, որպէս պիռոնացիք ակադիմեանք: Իսկ իմաստունն ըստ երկուց եղանակից իմանալի է: Առաջինն՝ խոհեմք և իմաստունք բնականապէս..., երկրորդ՝ շնորհիւ ընկալեալք» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 269): Երբեմն էլ տալիս է տարբերակիչ բացատրություններ՝ ընդգծելով առարկայի, երևույթի առավել զանազանող հատկանիշը, ներկայացնելով այն իբրև հիմնական մեկնություն. «Գիծն երկայն միայն, իսկ մակերևոյթն՝ լայն, իսկ մարմինն՝ որպէս խորութիւն» (Գր. Տաթևացի, Լուծումն գրչութեան, Մատենադարան, ձեռ. հ. 1115, էջ 205բ), «Օրէնքն է հարկի և պատուէրն՝ կամաց» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 340):

Տաթևացու մեկնած բառերի ցանկում առանձնանում են նրա օրերում արդեն անհասկանալի դարձած, ոճական սահմանափակում ստացած բառերի, հոմանիշների, համա-

նունների, նորովի բացատրվող բառերի խմբերը: Դրանց մի մասը արդի հայերենում գործածական չէ: Մյուս մասը հանդես է գալիս բառիմաստի ընդլայնմամբ, նեղացմամբ կամ բոլորովին նոր իմաստով: Մեկնվող բառերի մի խումբը հետաքրքիր է հոմանիշների առաջացման պատմության առումով. օրինակ՝ **պանդուխտ-նժդեհ-եկ, խէթ-ոխ-քեն, հիւանդութիւն-տկարութիւն-ցաւ, կռիւ- մարտ- պատերազմ.** սրանք արդի հայերենում ընկալվում են իբրև հոմանիշներ, մինչդեռ Տաթևացին ներկայացնում է տարբերակված իմաստներով: Վկայակոչելով նրան՝ կարելի է ասել, որ այդ բառերի իմաստային տարբերակվածությունը ընկալվել է մինչև 15-րդ դարի սկիզբը, այլապես դրանց տարբերության բացատրության կարիքն ըստ էության չէր զգացվի:

Բառիմաստային տեղաշարժեր են կատարվել նաև Տաթևացու բերած համանունների շարքում. դրանց մի մասը դուրս է եկել գործածությունից՝ տեղը զիջելով նույնիմաստ այլ բառերի, մյուս մասը կորցրել է համանունության եզրը՝ թելադրված արտալեզվական պատճառներով:

Բառամեկնություններում առանձնանում են մի խումբ բառազույգեր, որոնք նույն բառի տարբերակները լինելով (առաջացած դրափոխությամբ, ածանցմամբ, հնչյունի հավելմամբ կամ անկմամբ), Տաթևացու կողմից բացատրվում են իբրև տարբեր իմաստ ունեցող բառեր. **դժգմիլ-գժդմիլ, դժրել-դրժել, դարովել-դրսովել, կրճել-կրճտել, ցրուել-ցրել, բխում-բղխում:** Այս պարագայում հնչյունական տեղաշարժը բառի ձևական տարբերակների հետագա իմաստափոխության և իբրև առանձին միավորներ ընկալվելու պատճառ է դարձել:

Իր «Չայերեն նոր բառեր հին մատենագրութեան մէջ»

աշխատությունում Գրիգոր Տաթևացու «Լուծումն Պարապմանց Կիրոլի» երկը համեմատելով իր իսկ՝ Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք Պարապմանցի» հետ, Հրաչյա Աճառյանը գրում է. «Գրիգոր Տաթևացույն սոյն աշխատութիւնը տպուած է Կիրոլի Պարապմանց գրքին հետ: Հայկազեան բառարանը թէև գործածած է այս գիրքը, բայց ամենևին ձեռք դպցուցած չէ Տաթևացույն Լուծման, նոյնը կրկնած են նաեւ Առձեռնի աշխատասիրողները: Ահա այդ պատճառով է, որ 260 երեսնոց համեմատաբար փոքր աշխատութեան մէջ կը գտնեն 41 նոր բառ» (Աճառեան Հր., Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, էջ 83): Պետք է ասել, սակայն, որ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» գրքի հեղինակները «ձեռք չեն դպցուցել» Տաթևացու ոչ միայն այդ, այլև, առհասարակ, ոչ մի երկի: Պատճառը, որով բացատրվում է մխիթարյան հայրերի վերաբերմունքը Տաթևացու նկատմամբ, մասնակիորեն գտնում ենք Նոր հայկազյան բառարանի առաջաբանում, որտեղ Տաթևացու ժամանակակցի՝ Մխիթար Ապարանցու գրական ժառանգության ոճի վերաբերյալ այսպիսի տողեր ենք կարդում. «Ոճն է ստորին՝ հանգոյն Տաթևացույն Գրիգորի՝ իւրոյ ժամանակակցի և ոտոխի, երբեմն կարծեցեալ բարեկամի» (Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Ա., Երևան, 1979, էջ 15): Մի կողմ թողնելով այն, որ չի կարելի համաձայնել անվանի հայագետների այդ կարծիքին, առավել ևս, որ նրանց զուգահեռը անարդարացի է և փաստերով (Տաթևացու և Ապարանցու երկերի համեմատությամբ) չհիմնավորված, հարց է առաջանում, թե ինչու, միանման որակելով Տաթևացու և Ապարանցու ոճը, այնուամենայնիվ, բառարանի հեղինակներն ընդգրկել են Մխիթար Ապարանցու

բառագործածությունները, իսկ Տաթևացունը՝ ոչ: Իրական պատճառը, ցավալիորեն, կրոնական-քաղաքական է, որն ըստ էության պարտադրված էր մխիթարյան հայրերին՝ պատմականորեն, այսինքն՝ վարքագծի նման դրսևորումն այսօր, թերևս, հասկանալի է:

Այս բացը հետագայում Հրաչյա Աճառյանը լրացրել է իր «Հայերեն արմատական բառարանում»՝ ընդգրկելով, սակայն, Տաթևացու միայն «Գիրք քարոզութեան» երկի երկու հատորների, «Գիրք հարցմանցի», «Ոսկեփորիկի» լեզվական նյութը (այսինքն՝ չորս աշխատության, մինչդեռ Տաթևացու երկերի թիվը գրեթե երեք տասնյակ է), այն էլ՝ ոչ ամբողջությամբ:

Ներկա աշխատությամբ ներկայացվում են Տաթևացու գրական ժառանգության հեղինակած նոր բառերը, որոնք վկայված չեն ուսումնասիրողների կողմից: Բնականաբար, այս բառերը հիմնականում տեղ չեն գտել գրաբարյան բառագանձը ներկայացնող բառարաններում: Կան բառեր, որոնք ընդգրկված չլինելով «Նոր հայկազյան բառարանում»՝ ներկայացվել են Մ. Ավգերյանի «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» մեջ, Ալ. Խուդաբաշյանի «Հայ-ռուսերեն բառարանում», Գր. Փեշտմալճյանի «Բառգիրք հայկազեան լեզուի» գրքում և կամ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» (Աւգերեան Մ., Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865: Խուդաբաշյան Ալ., Հայ-ռուսերեն բառարան, Կ. Ա-Բ, Երևան, 1986-87: Փեշտմալճեան Գր., Բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Պօլիս, 1844-46: Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, Կ. 1-4, Երևան, 1944-45): Սակայն, քանի որ վերջին բառարաններում, ինչպես հայտնի է, նշված չեն բառագործածության առաջին աղբյուրները և

հեղինակները, ուստի, այնուամենայնիվ, բերում ենք այդ բառերը՝ համապատասխանաբար նշելով, թե որ բառարանում են ընդգրկված:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ Տաթևացին դիմել է նոր բառերի մի շարք հանգամանքներում: Դրանց մի մասը կրկնությունից խուսափելու արդյունք է: Այսպես, օրինակ, «կրկին գինեալ» բառակապակցությունը նա փոխարինում է **կրկնազեն** բարդ բառով, որը նորակազմություն է. «Ձոր օրինակ գինուրք կրկին գինուք սպառազինին՝ կրկնազեն լիցուք» (Գր. Տաթևացի, Գիրք բարոգութեան, Ամարան, Կ. Պօլիս, 1741, էջ 3347): Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց գրքի» «դժուարաւ մաքրելի» բառակապակցությունը նույն կերպ փոխարինում է **դժուարմաքրելի** բառաբարդմամբ: Խոսելով գիսաստղի մասին, գործածում է սլացեալ աստղ, գիսաւոր աստղ, աստղ ագելոր և **աստղաքլոր** բառերը, որոնց մեջ վերջինը նորակազմություն է. «ոչ բարեկիրք»-ը բացատրում է՝ **«դժուարակիրք կամ դժուարիմաց»**:

Նոր բառերի մյուս մասը երևույթների նոր կողմերի ու հատկանիշների ընկալման արդյունք է: Այս դեպքում այդ բառերը ծառայում են համակողմանի, ամբողջական բացատրություններ տալուն: Օրինակ՝ զանազան տեղեկություններ հաղորդելով արծվի մասին, Տաթևացին նրան բնորոշում է հետևյալ հատկանիշներով. բարձրաթիչ, սրատես, բազմակեաց, թագաւորական, վերագոյն, **սառայ** (սառը հայացք ունեցող). վերջինն իր բառն է: Ստորաքարշ, երկրաքարշ, վայրաքարշ բառերի սկզբնական իմաստը կապվում է սատանայի հետ, որի բնակության տեղը երկիրն էր՝ ներքևը: Այս իմաստով **դիւսսայթար** նորակազմությունն

ուղղակիորեն մատնանշում է այդ բառերի սկզբնական իմաստը, լրացնում այդ շարքը նորովի՝ շեշտելով, որ դրանք նշանակում են նաև չարի կողմից սայթաքված, խոտորված:

Նոր բառերի մյուս մասը նկատվում է հոմանիշների շարքում (այդ կերպ հասկանալի դարձնելով բառիմաստը), ինչպես՝ լինի կոխան և **ջրկոյս**,

զլացող, **բասրասեր**, դսրովօղ:

Եվ վերջապես, առկա համեմատության եզրով բերվում է նորակազմ բառը. օրինակ՝ երեկոյան ժամերգության կցուրդի համար գործածական մեսեդիի հետ առավոտյան ժամերգության համար դիմում է **առաւօտերգ** նորակազմությանը, դռան համար գործածական երկբացիկ բառի հետ կիրառում **միափեղկի**-ն:

Եվ կան նաև բառարանագրական կաղապարով ներկայացվող պատրաստի բացատրություններ, որոնցով առհասարակ շաղախված է նրա գրական ժառանգությունը, այսինքն՝ երբ հեղինակն ինքը մեկնում է բառը, որոնց մեջ նույնպես երբեմն հանդիպում ենք նոր բառերի.

**չմարդամոյրք** - ի կարգ աղքատաց են,

**ճրագայոյծ** - վասն զի ճրագով յերեկոյս լուծանենք զպահքն:

Հայտնի է նաև, որ նոր բառերը սովորաբար կազմվում են կան ածանցման, կան բառաբարդման ճանապարհով (արմատական բառեր հազվադեպ են հանդիպում). Տաթևացու նորակազմ բառերը հիմնականում բարդ են: Այս պարագայում, ինչպես և սպասելի է, երկու բառիմաստի համադրությամբ կան՝ ա) **նոր իմաստ է ձևավորվում** (ասենք, օրինակ, **ցայրացանկ** բառում. մի դեպքում ունենք ցայր՝ մինչև այդ

իմաստը, մյուս դեպքում՝ ցանկ՝ եզր, իմաստը. արդյունքում հեղինակի նորակազմությունը ձևավորել է **մինչև այգի վերջը** բառիմաստը), կամ՝ բ) **հոմանիշ է ստեղծվում (քառադրոշմ**, որ նույնն է թե նախկին **քառակերպ** կամ **քառածև-ը**) և կամ՝ գ) **իմաստի սաստկացում է կատարվում. ժանտաժանին՝ շատ ժանտ**: Եվ քանի որ նորակազմությունները հիմնականում ստեղծվում են բառաբարդման կամ ածանցման ճանապարհով, բնականաբար, կաղապարը նույնն է նաև Տաթևացու դեպքում. արմատական բառերը խիստ սակավաթիվ են, որոնք, մեր կարծիքով, քիչ հավանական է, որ հեղինակային ծագում ունենան (բացատրությունները տրվում են տեղում): Յեղիմակային նորաբանությունները երբեմն նույնիսկ շարքեր են կազմում. դրանցից մեկը կազմված է «օրին» բաղադրիչով. **աւագօրհնութիւն, գերեզմանօրհնէք, երեցօրհնէք, մայրօրհնէք, ջրօրհնէք, սերմնօրհնէք, քահանայօրհնէք**: Բերված բարդ բառերը բոլորն էլ կապված են եկեղեցական այս կամ այն ծիսակատարության հետ:



ԱՅՆԵՐ ԵՆԻՍՈՒՑԱՆԵՐ ՅՐԺԱՍԻԿ  
 Լճուսոյ աշակերտի, և Պարզեփն Լուսաւորի  
 սբին Պրեզորի Տաթևացւոյ, Լճուսոյ Արդիտի,  
 Բուն ինքնատասերի և խոտակրոն ճգնաւորի՝ Լճուսոյ  
 զոր գիրս հարցմանց, ի հերթումն աշանդից ամենայն  
 հերձուհեոց, Լուսի լուծումն բազմազան բանից շըշ  
 մարտու. ի գուտս սբոյն Լճուսոյ և յօգուտս ողջափառ  
 մանկանց ԿԵՂԵՑ հայաստանեաց սբ Եկեղեցւոյս՝ ԼԵՒ:



ԱԿՕՍԱԴՐԵԱԼ, ԱԿՕՍԱՅԵՐՁ - ՆՂԲ-ն և մյուսները տալիս են ակօսաբեկ, ակօսահատ, ակօսածեւ, ակօսածիգ ձևերը միայն (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 568, 569):

ԱՅԼԱՍԱԶՆ - «Եւ ԲԺ-ան արատ պատարագին: Նախ կոյրն, իսկ ի մեզ որ մտօքն իցէ: Երկրորդ՝ բեկեալն ի գործոց բարեաց: Երրորդ՝ լեզուատն, ուր է անծայնն, որք ոչ ունին զխոստովանութիւն: Չորրորդ՝ մարմառոտն, որ կաշին պատառեալ է և խոց լինի, նշանակէ զխոց մեղաց: Դինգերորդ՝ քոսն, որ յայտնին է: Վեցերորդ՝ երքանոտն, սնքոտն՝ անբուժն է: Եօթներորդ՝ քածաւարին, **այլամագն** խառնեալ՝ զանագան բարուց նշանակ: Ութերորդ՝ թաղամասաւորն, որ թաղիացեալ է միսն ի կաշին և չքերթութիւն, որ անորիշ է ի խառնակ կենացն: Իններորդ՝ ականջատն է, որ խուլ է մտօք: Տասներորդ՝ կրճատն, որ է ագատն՝ անամօթն է: Մետասաներորդ՝ մալեալն, տրեալն, պակասն արիութեամբ: Երկուտասաներորդ՝ փօշտանկն, որ հատեալ է աղիքն և ի դուրս թափեալ, նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: Այլև ի վերայ այսր հիւանդն և գիժն, որ մտօքն մոլի և մեղօք հիւանդ, չէ ընդունելի: Ի նոր պատարագս այսպիսի մարմնոյ ընտրութիւն ոչ է: Զի ճշմարիտ պատարագն Քրիստոս է և տուրք աղքատացն: Սակայն հաճելին մեր ընդունելի է Աստուծոյ. զառաւել սէրն նշանակէ, զի որ ինչ մեզ անպիտան է և Աստուծոյ անպիտան է» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց էջ 371):

Մեզ հետաքրքրող բառը բերված է իբրև «քածավարի» բառի հոմանիշ, այսինքն՝ այն կնաբարո վարքի հատկանիշներից մեկն է: Բառարանները չեն վկայում:

ԱՆԲԻԾՔՆ - «Վերջին և առաջին գուրդայն յանմեղութենէ սասցեալ և միջինն յետ մեղանացն. ...**Անբիծքն** վասն մեղաց պատարագ է, նոյնպէս և յիսներորդ ողորմեայն վասն

մեղաց է, ալէլու ոչ ասի» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 630): ՆՂԲ-ն և ԱԲ-ն վկայում են՝ անբիծ - անարատ իմաստով: Եկեղեցական տերմինը չի բերվում:

ԱՆԳԱՆԱԿ - «Այլև նուէրք ԲԺ-ան իշխանացն սայլս և եզինս: Բաց յայսցանէ ԲԾԾԲ գլուխ ոսկի տուփ խնկով: Կոնք արծաթի, որ է Բ ունկի **անգանակ**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 359): Բառարանները չեն վկայում: Նկարագրութեամբ հասկանալի է, որ խոսքը երկունկ (երկբռնանի) կոնքի մասին է:

ԱՆՄԿՐՏԵԱԼՔ - «Իսկ վասն անսուրբ հոգւոցն՝ որք են անմաքուր և մեղաւոր որպէս **անմկրտեալքն** և ուրացողքն և ախտացեալքն» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ձմերան, էջ 238):

ԱՇԽԱՐՅԱՍԵՐՆ - «Որպէս տէրն ասէր՝ ամենայն աշխարհի ի չարի կայ, **զաշխարհասէրն** ասէ՝ որ միշտ ի չարիս ընթանայ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ձմերան, էջ 262): Բառարանները վկայում են «աշխարհասիրութիւն» բառը՝ *սէր աշխարհի և աշխարհայնոց* բացատրութեամբ. գոյականական կիրառությունը վկայված չէ:

ԱՌԱԶԱԳԱԼ (ՅԱՌԱԶԱԳԱՅԻ) - «Երկրորդն է պատճառաբանական, որ ի պատճառեալեացս, այսինքն՝ յարարածոցս զգեղեցիկն տեսեալ, զպատճառն և զարարիչն վերակոչենք և անուանենք, որպէս է բարի, գեղեցիկ, լոյս, կեանք, իմաստութիւն և այլն: Եւ է սա երկրորդ, զի ի պատճառէ ստեղծման էիցս՝ աստուածաբանութիւնս այս **յառաջագայի**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 122): ՆՂԲ-ն ունի առաջագնաց, յառաջագնաց ձևերը. բայական ձևը չի վկայում: Ունի առաջ է գալիս իմաստը:

ԱՍՏՂԱՔԵՎՈՐ - «Սլացեալ աստղ», «գիսաւոր աստղ» ձևերի հետ հեղինակը բերում է նաև **աստղաքևոր** ձևը՝

իբրև *աստղ* և *ազելոր* բառերի բառաբարդում. «[գոլորշի] անօսրագոյն և ջերմութիւն շատ ունի և հասանի մինչև ի չորս տապաղայ օդոյդ մերձ ի բոլորակ հրոյն: Եւ յասմանէ լինի **աստղաքևոր**» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 518), այսինքն՝ ազի ունեցող աստղ:

ԱՐԺԱՆԱԿԱՌՈՅՑ - «Շարժեցաւ հիմն **արժանակառոյց**»: Բառն օգտագործված է Որոտնեցուն նվիրված Ներբողյանում (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715): Չի վկայում գրաբարի ոչ մի նշանավոր բառարան: Եվ քանի որ բառը վկայված չէ 2006թ. հրատարակված Ռ. Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարանում» նույնպես, նշանակում է բառը այդպես էլ դուրս է մնացել հայագետների ուսումնասիրությունից: Տեքստում ունի **ամուր**, **պնդակազմ** իմաստը:

ԱՐՏԱԳՈՒՆԵԱԼ - «Որև գիա՞րդ այսօր տեսանենք զգունագեղ ականաւոր ակն **արտագունեալ**» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 714): Ունի **գունաթափված**, **գունազրկված** իմաստը: Որևէ բառարան դարձյալ չի վկայում: Բառակազմության տրամաբանությունը հասկանալու համար ասենք, որ գրաբարն ունի **արտաբունիմ** բառը՝ «արտաքս ելանել իբրև բոյս ի բնէ իւրմէ» իմաստով:

ԲԱԶՄԱԿՈՐԾԱՆ - «սա հնագոյն նմին ի **բազմակործան** փորձանաց զերծեալ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 712): Բառարաններն ունեն՝ **բիւրակործան**, որ ՆՅԲ-ն բացատրում է՝ «բազում անգամ կործանեալ կամ վտանգեալ»:

ԲԱՑՈՒՆՉ - «**Բացունչն** զուարթ է և ուժեղ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 246): Բառարանները չեն վկայում: Ունի **լայն ռունգեր ունեցող** իմաստը:

ԲԱՍՐԱՍԵՐ - «Եւ մի՛ հարևանցի տեսութեամբ և բանիւ

արշաւել, որպէս ոչ մտերիմ կամ զրախօս զլացօղ և **բասրասէր** դարովօ: ...Եւ զայս ոչ վարկպարագի, այլ բազմաշխատ ամօք ի սոյն դեզերեալ ընծայեցի զսա եկեղեցոյս Յայաստանեայց» (Գր. Տաթևացի, Լուծումն պարապմանց Կիւրղի, էջ 775): ՆՅԲ-ն ունի բասրական, բասրանք, բասրեմ ձևերը, հետևաբար բառի բացատրությունը կարող է լինել՝ բանասարկու, պարսավասեր:

ԲԱՐԵՉԱՓ - «և զգիրք մասնկացն **բարեչափ** պատկանեալ հասակէ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 712): Որևէ բառարան չի վկայում: Ունի կանոնավոր, հավասարաչափ իմաստը:

ԳԵՂԵՑԿԱՊԱՍԿԵՐ - «**գեղեցկապատկեր** կին» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ձմերան, էջ 329): Առձեռն բառարանը և Մալխասյանցը վկայում են՝ բնականաբար չնշելով առաջին աղբյուրը:

ԳԵՐԵՉՄԱՆՕՐՅՆԷՔ - «Բ-շաբթին մեռելոց է և ոչ **գերեզմանօրհնէք**»: Կատարվում է Չատկի Աւագ ուրբաթ օրը. «խաչիւ և աւետարանաւ աւետեմք ննջեցելոցն զմեծ օր աւետեաց նոցա և կնքեմք զգերեզման» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 684):

ԳԻԹԻՈՐ - Աճառյանի կարծիքով հին մատենագրության մեջ **գէթ** բառը (հանցանք նշանակությամբ) առաջին անգամ գործածվել է Առաքել Սյունեցու «Աղանգրքի» մեջ, որից կազմված **գիթուր** բառը՝ «մէկ անգամ գործածուած է յետին գրուածքի մը մէջ» (Յր. Աճառեան, Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հ. Բ, էջ 147). մինչդեռ այս երկու բառն էլ մենք գործածված ենք գտնում Տաթևացու Ամարան քարոզգրքում. «Զի՞նչ է իմ գէթն», «Գիթուր և վնասակար եմ Աստուծոյ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 449, 628):

ԳԻՃԱՍԵՐ - «այլ է երազ արի մարդոյ և այլ երկչոտին, այլ

**գիճասիրին** և այլ պարկեշտին» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 268): բերում է «ջրասնոյցք» բառի հետ՝ իբրև «պարկեշտին» հակամիջ՝ բնորոշելով ցանկասրիությունը:

ԳԼԳԼԵԿ - «իսկ զգեցուցանել հանդերձ ըստ պատշաճին **ՊՂՂԵԿ** և խոշոր» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 704): ՆՅԲ-ն ունի **գրգլեակ** ձևը՝ հանդերձ աղքատի հին և գծուծ իմաստով: Այստեղ, հավանաբար, ունի կոպիտ իմաստը:

ԳՐԿԱՓԱՐ - «Վասն որոյ ըղձալի է ինձ **գրկափար** համբուրել զփոշի այնր գարշապարաց» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715): Որևէ բառարան չի վկայում: Ունի **գրկախառնված, գրկով փարված** իմաստը:

ԴԵԶՕՐՅՆԷԻՑ - «Անդ և **դեզօրհնէից**, ագապս մատաղաց և ոգէհանգիստ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 362): Ունի **դեզի օրհնություն** իմաստը:

ԴԺՈՒԱՐՅԱՄԲԵՐ - «**դժուարհամբեր** պատուերքս» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 72ա): Ունի դժվարհաղթահարելի, մեծ համբերություն պահանջող իմաստը:

ԴԺՈՒԱՐՅԱԲԱՆԲ - «**դժուրահաւանք** էին» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 182ա): Մալխասյանցը բացատրում է՝ դժուրահաճ:

ԴԻԿԱՍԱՅԹԱԲ - «**դիւսասյթաք** և վայրաքարշ բնութիւն» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 307): Նշանակում է չարի կողմից սայթաքված, խոտորված:

ԵՕԹՆՕՐԷԲ - «Զի՞նչ է **եօթնօրէքն** և ամսագլուխն և տարերլորն» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 683): Բառարանները վկայում են **եօթնօրեայ** ձևը:

ԸՆԴԱՍՈՅԶ - «**Ընդասոյզ** արար» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 72ա): Բառարանները չեն վկայում: Ունի **ընկղմել** իմաստը:

ԸՆԴԴԻՄԱՏԵՍԱԿՔ - «ասին ոչ է և **ընդդիմատեսակքն**, որպէս անմարմին, անկենդան և անշունչ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 111): Ունի **տեսակակիր** իմաստը:

ԹԵՐԵՓ - «Ասեն իմաստունք՝ արծաթ է **թերեփ** ոսկի» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն սաղմոսաց, 24ա): Ունի **կիսաեփ** իմաստը:

ԺԱՆՏԱԺԱՆԻՆ - «Զի սովաւ նորոգեցաւ դաւանութիւն որյեփեսոս և հերքեալ կարկեցաւ **ժանտաժանին** Նեստորիոս» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 713): Որևէ բառարան չի վկայում: Առձեռն բառարանը և Ստ. Մալխասեանցը վկայում են **ժանտաժուտ** ձևը՝ «ժանտին ժանտը» (շատ ժանտ) իմաստով:

ԻՆՔՆԱՊԱՐՏ - «**ինքնապարտ** զանծինս» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 285բ): ԱԲ-ն տալիս է՝ «ինքնիրմէ պարտաւոր՝ յանցաւոր», Ստ. Մալխասեանցը բացատրում է՝ ինքնին պարտաւոր:

ԻՐԱԿԵՄ - Սակավաթիվ արմատական բառերից է: Տաթևացին բացատրում է՝ իր գործեա (Գր. Տաթևացի, Լուծումն գրչութեան, Մատենադարան, ձեռագիր հ. 1115, էջ 212բ): Փեշտմալճյանը տալիս է՝ իրակեմ - առնել ինչ, գործել բացատրությամբ, Մալխասյանցը՝ մի բան անել նշանակությամբ:

ԼՈՒՍԱՆՇՈՅԼ - «**լուսանշոյլ** ցոլմանց արփիաւորչի մեռոյն հսկողին» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 711): Բառարաններից վկայում են Առձեռնը և սրան հետևելով՝ նաև Ստ. Մալխասեանցը՝ «լոյս ցատկեցնող, լուսափայլ» իմաստներով: Սակայն Առձեռնը, ինչպես հայտնի է, հղում չի կատարում հեղինակային առաջին բառագործաթոթյանը, իսկ Մալխասեանցը բերում է «**հին բառ կան նշանակութիւն**» բառանշանի տակ: Սկզբնաղբյուրը, ամե-

նայն հավանականությամբ, Տաթևացու այս բառագործա-  
ծությունն է:

ԼՈՒՍՏԵՐ - «իսկության նոցին հետևիլ, զօրէն **լուստեր**  
նիւթից ի նմանոյն զնոյն ընդունիլ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզ-  
ութեան, Ամարան, էջ 711): Ստ. Մալխասյանցը վկայում է  
«անյայտ նշանակութեամբ բառ» նշանի տակ և բերում  
«զօրէն լուստեր նիւթից» միակ վկայությունը, որը բացարձա-  
կապես նույնանուն է Տաթևացու վերոնշյալ գործածության  
հետ: Հր. Աճառյանը նույնպես հաստատում է, որ Տաթևացու  
վկայությունը միակն է. «անյայտ նշանակութեամբ նորագիտ  
բառ, որ մէկ անգամ գտնում են գործածուած Տաթև. ամ. 711»  
(Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ  
303): Բառը մինչև հիմա բացատրված չէ, և մնում է միայն հա-  
մաձայնել անվանի լեզվաբանների հետ, այսինքն՝ «անյայտ  
նշանակութեամբ բառ»:

ԾԸՆԵՐԱՅԻՆՔՆԵՐ - «Ըղծալի է ինձ համբուրել զփոշի  
այնր ծնկաց, որովք **ծընրահանգոյց** չարչարանօք մաշէր»  
(Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715): Որևէ բառա-  
րան չի վկայում: Ունի **ծնկի իջած, ծնրադրած, ծնկաչոք**  
իմաստները:

ԿԱՐԾՈՏ - «Ձայնն բարակ, տխուր է և **կարծոտ**»  
(Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 247): Բառարանները չեն  
վկայում: Ունի **թավ** իմաստը:

ԿԻՍԱՓՈՒՆՆ - Մեսեդին, Ուղղիցին, Խաչեցարին, Գուր-  
ղայն, Անբիծքն, Առաւօտերօզը և բերվող **Կիսափոփը** պա-  
տարագի ընթացքում կատարվող սաղմոսների կամ այլ ծի-  
սական երգեցողության մասեր են. Տաթևացին դրանք հա-  
ճախ օգտագործում է իբրև հատուկ անուն, այսինքն՝  
դրանք ծիսական առումով նրա օրերում ընկալվել են իբրև  
պատարագի ինքնուրույն մասեր:

ԿՐԱՍԵՐՈՒԹԻՒՆ - «իսկ իմոյս **կրասերութեան**՝ անբավա-  
կան գոլոյն առ սոցա՝ միայն տհաս մտօք...» (Գր. Տաթևացի,  
Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 711):

ԿՐԹՈՏ - «որովք **գկրթոտ** ծունկս հաստատէր» (Գր. Տա-  
թևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715): Որևէ բառարան չի  
վկայում: ՆՐԲ-ում վկայվող **կթոտ** ձևը նշանակում է **թույլ,**  
**տկար**, որը կարծես բացատրում է ծունկը հաստատելու  
հանգամանքը: Սակայն, ծունկը կարող է լինել և կիրթ,  
այսինքն՝ **մարզված, վարժված**:

ԿՐԿՆԱԶԷՆ - «Ձոր օրինակ զինուորք կրկին զինուր...  
**կրկնազէն** լիցուք» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամա-  
րան, էջ 347):

ՀԱՂՈՐԴԱԴՐԱՍ - «Այլ թէ ասեն **հաղորդադրամ** կամ  
խոստովանադրամ, խորթ է, յագահութեանց երիցանց  
սահմանեալ և ոչ ըստ կանոնաց որպէս այլքն» (Գր. Տաթևա-  
ցի, Գիրք հարցմանց, էջ 684): ՆՐԲ-ն չունի. Առձեռն բառարանը  
բերում է՝ «հաղորդի համար առնուած անարժան ստակ»  
բացատրությունը:

ՀԱՍԱԾՈՒՄ - «Վայ և եղուկ ոչ միայն **համաթշուառս**  
անձին, այլև համագումար աշակերտեալ խմբից» (Գր. Տա-  
թևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715): Ունի ամբողջու-  
թյամբ թշվառության մեջ իմաստը:

ՀԱՍԱՆՄԱՆԻԼ - «Նոյնպէս և աշակերտին պարտ է գաղա-  
փար և նախօրինակ դնել զբանս և զգործս վարդապետին և  
ուսանիլ և **համանմանիլ** նմա» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզու-  
թեան, Ձմեռան, էջ 195): Բառարանները վկայում են «համան-  
ման» բառը՝ *նմանակից, յար և նման* իմաստով. բայական  
ձևը չի վկայվում:

ՀԱՅՐԱԶԵՂԾԻԿ - «Մանաւանդ թէ **հայրազեղծիկ** որ-  
դեացս» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715):  
Բառարանները վկայում են «հայրազեղծ» ձևը:

ՀԱՇԱՆԴԱՄ - «... հաշանդամք, զի նա խոցեցաւ» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 297ա): Ինչպէս հայտնի է, հայերենում ունենք հաշ և հաշմ արմատները: Երկրորդով բարդված «հաշմանդամ» բառը բառարաններում բերվում է իբրև խեղված անդամ ունեցող, իսկ Տաթևացու «**հաշանդամ**» նորակազմությունը **նիհար, ծյուրված** մարմին ունեցող նշանակությամբ:

ՀԱԲՍԱԲԱՐՑ - **Մայրօրհնէից** կարգի բացատրությամբ «Գիրք հարցմանցում» հաջորդում է «Որև զուստիանէ սրբուհի կոյսն մայր արար կանանց **հաւատաւարց**» նախադասությունը: (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 658): Հավանաբար ունի **միանձնուհի** իմաստը:

ՀԵՐՉԱԴԱԲԱՆ - «և ոչ բնակէր ի սրտի ի տան նորա ամենայն ամբարտաւան կան **հերձադաւան**» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 712): Որևէ բառարան չի վկայում: Ունի **հերձվածողներին դավանող** իմաստը:

ՀԻԲԱՆԴԱՏՈՒՆ - (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 299): Վկայում է միայն Մալխասյանցը՝ «հիւանդանոց, որտեղ հիւանդներին խնամում և բժշկում են վճարով» բացատրությամբ:

ՀՈԳԻԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ - (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 68ա): Որևէ բառարանում վկայված չէ:

ԾՐԱԳԱԼՈՅԾ, ԾՐԱԳԱԼՈՅՍ - Տաթևացին տարբերակում է ճրագալոյց-ը, ճրագալոյծ-ը, ճրագալոյս-ը. «Իսկ **ճրագալոյծն** վասն զի ճրագով յերեկոյս լուծանենք զպաիքն: Իսկ **ճրագալոյսն** բազում ունի միտս» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 31): Սրանց հետ Տաթևացին բերում է նաև **ճրագալոյց-ը**: Ինչպէս տեսնում ենք, վերոհիշյալ նորակազմությունները կրոնական արարողությունները տարբերակելու արդյունք են: Բառարաններում վկայված է մինչ օրս գործող միայն **ճրագալոյց** ձևը:

ՄԱԿԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ - Տարբերելով ապականության երեք տեսակ, Տաթևացին հետևյալ բացատրությունն է տալիս. «**ապականութիւն**... որ ի կեանս. **մակապականութիւն**..., որ յետ մահու. **բնաւ ապականութիւն**, յորժամ մարմինն ի տարերս լուծանի» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն սաղմոսաց, Մատենադարան, ձեռ. հ. 5869, էջ 28ա):

ՄԱՅՐՕՐՅՆԷՑ - «Իսկ զկարգ **մայրօրհնէից** սուրբն Կիպրիանոս Կարգեդոնացի [արար]» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 658): ՆՅԲ-ն չի վկայում:

ՄԱՐԳԱՐԷԱԲՈՒԴԵՆ - «որ բոլորովին էլ **մարգարէաբուղխ հոգի**» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 712): Ունի **մարգարեական, մարգարեաշնորհ** իմաստը:

ՄԱՐԴԱԶԳԵԱՑ - (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 76): ՆՅԲ-ն և մյուս բառարանները վկայում են «մարդագգեստ»-ը՝ «որ զգեցեալ է մարդկութիւն» կամ «մարդացեալ» իմաստով. բայական գործածությունը չի վկայվում:

ՄՁՂՆԱՏԵՍԱԿ - «Որպէս զծու հաւի դեղնուցն ի մէջ ջրոյն և **մզղնատեսակն** ի խեճեպոյն է ամրացեալ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 181): ՆՅԲ-ն եթէ մզնաձև-ի հետ վկայում է մզղնաձև-ը, ապա մզնատեսակ ձևը հիշատակվում է առանց մզղնատեսակ-ի: Հատվածում նշանակում է՝ **ձվի կեղևին կպած թաղանթը**:

ՄՂՏԱՏԵՍԱԿՔ - «Եւ զոր այժմ **մղտատեսակ** և հեռու տեսանէր, յայնժամ յայտնի և մերձակա տեսանէ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 668): Եթէ **մզղնատեսակ-ը** ըստ Տաթևացու նշանակում էր՝ ձվի կեղևին կպած թաղանթը, ապա **մղտատեսակ-ը** բերվում է՝ **մթամած, խավար** իմաստով:

ՅԱԿԻՆԴԱՓՕՍ - «Չայն ի Դ բաժանի. մին անյօդ և աննշան որպէս անշնչից. երկրորդ, անյօդ և նշանական, որպէս կենդանեաց. երրորդ, յօդեալ և աննշան, որպէս **յակինդա-**

**փօս.** չորրորդ, յօդեալ և նշանական, որպէս բանս մարդոյ» (**Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, Մատենադարան, ձեռ. հ. 1264, էջ 40բ**): Բառը վկայված չէ ոչ մի բառարանում: Սակայն, քանի որ Տաթևացին այս դասակարգմամբ հետևել է Դավիթ Անհաղթին, պետք է ենթադրել, որ խոսքն ինչ-որ առասպելական կենդանու մասին է. Անհաղթը «յօդեալ և աննշանական» համարում է ծիակապիկի և եղջյուրաքաղի ծայնը (**տե՛ս Դավիթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեան Պորփիրի» (աշխատասիրությամբ Ս. Արևշատյանի), Երևան, 1976, էջ 9-10**):

**ՅԱՆԿԱՐԾԱԿԱՍԱՐ** - (**Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 668**): Բառարանագրությամբ հայտնի է «յանկարծամահ» բառաձևը:

**ՅԵՂԱԳՐԵԼ** - «**յեղագրեցաւ** ըստ իրին անգիծ մատենիւ» (**Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715**): Ոչ մի բառարան չի վկայում: Հավանաբար, ունի վերափոխվել, համբարծվել իմաստը:

**ՆԱԽԱՊԱՏԱՐԱԳ** - «երախայրիք և **նախապատարագ** եղեն Աստծոյ» (**Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 38ա**): Խոսելով պատարագ բառի մասին՝ Աճառյանը գրում է. «պատարագ բառի վրայ երկու անգամ ընդարձակ վեճ է բացուած հայ թերթերի մէջ»: Հերքելով այն կարծիքները, որ բառն ունեցել է հաց, բաղարջ նշանակությունները, նա պնդում է, որ պատարագի «առաջին և նախաքրիստոնէական նշանակութիւնն է «նուէր, ընծայ», ուստի չի կարող ծագիլ «բաղարջ ևն» նշանակող ձևերից, որոնք յետին քրիստոնէական շրջանի առումներ են» (**տե՛ս Գր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 39**): Աճառյանի ասածը, ինչպես տեսնում ենք, հաստատվում է Տաթևացու վերոհիշյալ բառարարդմամբ, որ նշանակում է՝ նախընծայ: Բառը վկայում է միայն Մալխասյանցը՝ բերելով դարձյալ «առաջին պատարագ, ընծայ, նախընծայ» նշանակությունները:

**ՆԱԽՕՐԻՆԱԿ** - «Նոյնպէս և աշակերտին պարտ է գաղափար և **նախօրինակ** դնել զբանս և զգործս վարդապետին և ուսանիլ և համանմանիլ նմա» (**Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 195**): Այսինքն՝ իբրև նախնական օրինակ ունենալ, ինչպիսին է Հին կտակարանը Նոր կտակարանի համեմատությամբ:

**ՆԵՐԳՈՎՈՒԹԵԱՆՑ** - «Նախ՝ վերամբարծ հարկի քումդ հրամանի ըստ փիլիսոփային **ներգովութեանց**» (**Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 711**): Ունի **գովաբանություն** իմաստը:

**ՆԵՐԵԼԱՊԷՍ** - «սրբութիւն յատկական, որպէս սրբոյ Կուսին, բառնայ սկզբնական մեղս և զարմատն և զդիրահասութիւն մեղանչելոցն մահուչափ և **ներելապէս**» (**Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 462**): ՆՅԲ-ն ունի ներելի ձևը՝ «Այն ոք կամ ինչ, որում լինի ներել» բացատրությամբ:

**ՆՇԱՆԱԲԱՐ** - տարբերելով տապանաքարը և նշանաքարը՝ վերջինիս մասին Տաթևացին գրում է. «նշանակէ զքանակ հասակի մարմնոյն մեռելի» (**Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 679**): Այդ քարերին մինչև օրս էլ կարելի է հանդիպել հին տապանաքարերի մոտ, սակայն ոչ մի բառարան այս անվանումը չի վկայում: Մեզ չհաջողվեց գտնել այս նշանակությամբ երբևիցե գործածված մեկ ուրիշ բառ նույնպես:

**ՆՈՐԱԳԻԾ** - «ի սմանէ յոքնանկար **նորագիծ** տառք և երաժշտական եղանակք» (**Գր. Տաթևացի, Ամարան, էջ 714**): Խոսքը, ըստ էության, գրչության և ծաղկելու արվեստին է վերաբերում. Տաթևացին ակնարկում է, որ այն, ինչպես և երաժշտական հմտությունները սովորել է Որոտնեցուց (Տաթևացուց մեզ են հասել մի քանի մանրանկարներ): Որևէ բառարան չի վկայում. ունի **նորաձև, նորազարդ** իմաստը:

ՇԱՂԱԴՐԵԱԼ - «Միաւորութիւն սեռաբար տրամատի յերիս. ի յանշաղկապն և ի շաղկապեալն և ի **շաղաղրեալն**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 475): Հավանաբար, ունի հարադրել [հարադրված] իմաստը:

ՇԱՆԱԴԵՄՔ - «Իսկ թէ մարդ լինի **շանադէմք** և այն ոչ է ի խառնուածոյ շանց, այլ նշան է հայրենաց կամ սպի անձանց» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 267): ԱԲ-ն ունի՝ շնապատկեր, շներես: Մյուս բառարանները նույնպէս չեն վկայում:

ՈՂՋՈՅՆԱՈՒՔՆ - «Նախ, զի աստուած էր **ողջոյնառաքն**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 464): Ունի **ողջույն առաքողը** իմաստը:

ՈՂՋՈՅՆԸՆԿԱԼՆ - «զի կոյս էր **ողջոյնընկալն**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 464): Ունի **ողջույն ընդունողը** իմաստը:

ՈՒՐԲԱԹԱՋԵՆՆ - «Ասորիք, առաջինն **ուրբաթագենն**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 553): Բառարանները վկայում են **ուրբաթալէզ** և **ուրբաթազէլ** ձևերը՝ «աւելորդապաշտութիւն» իմաստով: Հավանաբար, ունի **ուրբաթ օրը զենված** իմաստը:

ՈՒՂՂԻՑԻՆ - «Իսկ չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն ընդ նաշիոյ և գառինն, նշանակէ զբանաւոր և զկենդանի պատարագս մեր: **Սեսեդին** Բ տուն. և Բ տուն **ուղղիցին** խնկօքն: Այլև ուղղիցին Դ տուն է կիսամասնեայ. ընդ սրբոյ **խաչեցարին** հզօր և անմահ գառինն եղեալ: Նոյնպէս և **առաւօտու երզն** և մեսեդի ճաշոյն և տասանորդ նաշիոյն Ժ զգայարանաց մարմնոյն ճնշելն» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 375, տե՛ս նաև *կիսափոխն* բառահոդվածը):

ՉԵՁՈՏՔՆ - «պարտ է, զի լիցին զենօղն արու աշխարհական և հաւատացեալ: Ջի էզն և **չեզուտքն**, և անկատարն, և

անհաւատն, և արիւնահեղն և կարգաւոր, սոքա վեցեքեան ոչ կարեն զենուլ, զի պիղծ է զենն նոցա» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 365): Որևէ բառարան չի վկայում:

ՉՄԱՐԴԱՄՈՅՐՔ - Տաթևացին տարբերակելով աղքատը և տնանկը՝ գրում է. «աղքատ է, որ ի բնէ ծնողաց կարօտ է ընչից և պակաս և տնանկ, որ ի մեծ տանէ անկեալ է և չքաւորեալ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 359): Այնուհետև թվարկում է աղքատներին. աղքատ են՝ որբը և այրին, հիվանդը և անդամալույծը, բանտյալը, գերին և ստրուկը, պանդուխտը, նժդեհը և եկվորը՝ «որք քաղց են և ծարաւ և կարօտ են բնական պիտոյից»: Այս բոլորը «ի կարգ աղքատաց են, որք **չմարդամոյրք** կոչին» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 360): Այսօրվա ընկալմամբ՝ աղքատն է:

ՊԱՆՈՒՆԱԶԳԵՍՏ - «պաճուճագգեստ լուսեղէն փառօք փայլեսցիս» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715): Վկայում է միայն Մալխասայանցը:

ՊԱՏԿԵՐԱՑՈՅՔ - «Երևի ապա թէ ճշմարիտ են **պատկերացոյցքն**, որ զբարս մարդոյն յայտնեն» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 246): ՆՂԲ-ն վկայում է միայն **պատկերացուցանեմ** ձևը՝ «տան պատկերը» իմաստով:

ՊԱՐԱՆՈՑԱԹԱԲԱԼ - «հուր ծորալիր, **պարանոցաթաւալ**» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 194ա): Բառարաններում բերում են *պարանոցաթաղ* ձևը, այսինքն՝ մինչև պարանոցը թաղված:

ՋՐԱՍՆՈՅՔ - «օդապարիկք (են) հպարտքն, **ջրասնոյցք**՝ ախտասերքն» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 18բ): Տաթևացու այս նորակազմութիւնն իմաստային աղերսներ ունի գիճասէր բառի հետ, որ, ինչպէս տեսանք, դարձյալ նորակազմութիւն էր և նշանակում էր անպար-

կեշտ, ցանկասեր: Առձեռն բառարանը վկայում է **ջրասուն** ձևը՝ «ջրով սնած» իմաստով: Մալխասյանցը վկայում է:

**ՋՐԿՈՅՍ** - «Լինի կոխան և **ջրկոյս**» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, 188թ): Հավանաբար ունի ջրից քշված իմաստը:

**ՋՐՕՐՀՆԷՔ** - «Իսկ զկանոն **ջրօրհնէից** սրբոյն Բարսղի է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ յերուսաղէմ, զի անդ հանդիպեցաւ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 658): ՆՀԲ-ն չի վկայում:

**ՈՒՍՏԵՍԱՅ** - «Ապա ուրեմն ի ժամանակս յայս ընկեր են Սաւուղայ, որք սակաւ մի կարծեօք հաւանին երագոց կամ վիճակաց և **ռամտեսաց** և այլոցն» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 429): Հավանաբար, ունի **գուշակ** իմաստը:

**ՍԱՌԱՉ** - «Բարձրաթռիչ է արծուին.. **սառաչ է**» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, 14ա). այստեղ ունի սառը հայացք իմաստը:

**ՍԱՍՏԱՍԱՐՍՈՒՈՆ** - «**Սաստասարսուռն** ատենս» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան 1950թ., էջ 567): Ունի խիստ դժնի ժամանակներ իմաստը:

**ՍԵՐՄՆՕՐՀՆԷՔ** - «Երանելին Սովսէս Խորենացի, որ էր գրիչ սրբոյն Սահակայ Պարթևի, յետ ճՁ ամի սրբոյն Գրիգորի եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: Ի բ ամի թագաւորութեանն, առաքեաց սուրբն Իսահակ և ետ բերել **զսերմնօրհնէքն** զկալոյ և զհնձանին, զոր արարեալ էր սուրբն Գրիգոր Աստուածաբանն յեօթն ամի հայրապետութեանն իւրոյ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 658): ՆՀԲ-ն չի վկայում:

**ՍԸՏԱՄԵՌՈՒԿ** - «Աւազակն, որ յաջմէն խաչեցաւ՝ Դեմաս էր անունն և որ յահկէն՝ Կոստաս: Ասեն ոմանք, թէ աջակողմեան ավազակն ի հեթանոսաց էր և ի ձախոյն՝ ի հրէից: Որ

էած ապտակ Քրիստոսի՝ Մաղքոս էր անունն: Որ եթուք՝ Ոչքոր: Որ զլեղին եբեր՝ Ռաքոս: Որ խոցեաց՝ Ղունկիանոս: Ասեն թէ՝ մին աչքն կույր էր և խոցեաց՝ թէ **սըտամեռուկ** չլինի» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 495): Տաթևացու գրական ժառանգության մեջ քիչ հանդիպող միջինհայերենյան բառաչերտի գործածություններից է: Բառարանները չեն վկայում:

**ՍՈՒՏԱՊԱՏԻՐ** - «Ի բաց դարձցուք ի **սուտապատիր** հեշտութեանց աշխարհի» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ձմերուան, էջ 259): Հոմանիշների համադրությամբ հեղինակը սաստկացրել է բառիմաստը. այսինքն՝ շատ ունայն և մտացածին:

**ՍՐԱԼՍՕՂ** - «**սրալսօղ** էշն» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 645): «Հայկազյան բառարանը» տալիս է *սրալուր* ձևը:

**ՍՐՊԻԿ** - «**Սրալիկ**՝ ի տակ մի՛ հնձեր, որ մանր հասկն աղքատին մնայ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 361): ՆՀԲ-ն չի վկայում: Նշանակում է՝ մաքուր, շատ մաքուր, սրբած:

**ՎԱՂԱԾԱՆՕԹ** - «ազգականք էին միմեանց և Դուկաս **վաղածանօթ** էր Պողոսի» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 11թ): Մալխասյանցը վկայում է՝ *վաղուց ծանօթ* և *վաղուց յայտնի* նշանակություններով:

**ՎԵՐՆԱՏԱՐԱԾ** - «բազկաց... **որովք վերնատարած** մաղթանօք զաղօթսն նուիրէր» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 716): Բառարանները չեն վկայում:

**ՏԱՐԷԲՈԼՈՐՆ** - «Ձի՞նչ է եօթնօրէքն և ամսագլուխն և **տարեբոլորն**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 683): Բառարանները վկայում են **տարեգլուխ**-ը, որին տեքստում **տարեբոլոր**-ը հոմանիշ է:





ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ

ՏՂԱՐՈՒՔ - Դարձյալ Տաթևացու գրական ժառանգության մեջ քիչ հանդիպող միջինհայերենյան բառաչերտի գործածություններից է՝ գրաբարյան **տղայք**-ի փոխարեն:

ՏՆՕՐՅՆԷՔՆ - «Այսպես և **տնօրհնէքն** ընծայք խաչին և աւետարանին, որ ի նոցա տունն մտանէ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 684): ՆՅԲ-ն չի վկայում:

ՏՐԵԱԼ - «Եւ տասներկու արատ պատարագին... մետասաներորդ՝ մալեալն, **տրեալն**. պակասն արիութեամբ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 371): Ինչպես և վերոնշյալ **չեզոտք**-ը, տրեալը այն արատների մեջ է, որոնք արգելում են անձին պատարագ մատուցել:

ՏՕՆԱՅՄԱՅՔ - «Եփուտն հոմանուն է, քանզի կոչի ուսանոց և կոչի վիճակ: Այն որ ուսանոց է, որպէս վակաս քահանային և որպէս մայրն Սամուէլի արար: Եւ այն որ վիճակն է ծիրանեգոյն հանդերձ է, որ զսեղան հացին և զխնկոցն ծածկին և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: Իսկ թերափն է բոլորակ հանդերձ ծածկոյթ տապանակին: Եւ զայս գործի հմայութեան առնէին և քաւութիւն թարգմանի: Այլև թերափն իղծք ասէ և թերափիմք՝ **տօնահմայք**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 76): Վկայում է միայն Առձեռն բառարանը՝ «հմայութեան տօն» բացատրությամբ:

ՑԱՅԳԱՑԱՆԿ - «Ի սմանէ յոքնանկար նորագիծ տառք և երաժշտական եղանակք, **ցայգացանկ** հսկմունք և ոտնկաց վերծանութիւնք» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 714): Բառարանները չեն վկայում: Ունի **մինչ այգավերջյան** իմաստը:

ՅՍՊԻՍ - (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 669): Գրաբարյան բառարանները վկայում են «**ցփսի**»՝ «այծու մագու հյուսած» բացատրությամբ ձևը. նորաբանություն է՝ դրափոխության ճանապարհով:

ՓՆՏՈՒԿ - «Բայց համեմատելով ընդ Վերին Երուսաղեմ իբրև **փնտուկ** է և որպես որ տեղի թագաւորացն այլ է և իշխանացն՝ այլ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 299): -Ուկ վերջավորութիւնը հուշում է, որ բառը միջինհայերենյան բառաշերտից է: Որևէ բառարան չի վկայում:

ՓՈՒՆԱԿԱՐԾ - «Զի ա՞րդ տեսանենք զհատն կենդանական հոգւոց կերակուր բանական՝ ի **փոխակարծ** ծմերան յերկար սերմանեալ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 714):

ՔԱԾԱԼԱՐԻ - (տե՛ս *այլամագն բառահոդվածը*): ՆՅԲ-ն վկայում է քածաւարոտ ձևը՝ արու որպէս քած եղեալ, իգացուցեալ իմաստներով. Տաթևացին բերում է իբրև **այլամագ**-ի հոմանիշ:

ՔԱՅԱՆԱՅՕՐՅԵՔ - «Իսկ վասն քահանայօրհնէիցն. սուրբն Սահակ է արարեալ՝ յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ՝ ի Նաւասարդի ամսեանն, որ օր մի էր ի յիշատակ սուրբ Կարապետին արար **զքահանայօրհնէքն**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 684): Քահանայի օրհնության կարգն է:

ՔԱՌԱԴՐՈՇՍ - «որովք **քառադրոշմ** նշանիւք զդէսն հալածէր» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 715): Խոսքը խաչին է վերաբերում: Ոչ մի բառարան չի վկայում: Այս իմաստով Մալխասյանցը բերում է՝ *քառաթել* և *քառադրութիւն* (խաչի քառաթել լինելը) բառերը: Ունի **քառապատկեր**, **քառածև** իմաստը:

ՔԱՍՓՈՒՄՔ - (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 417): Բառարանները վկայում են **փասքուս** ձևը՝ փսփսալով քսութիւն անող, զրպարտող, ընդվայրաբան իմաստներով. նորաբանությունն է՝ դրափոխության ճանապարհով:

ՔԱԿԱՆՕԹ - «Արքեպիսկոպոսք, որ թարգմանին եպիսկոպոսապետք և սքեմ նոցա **քականօթ** և պճղնաւոր» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 607): Բառարանները չեն վկայում:

ՔՆԱՓ - «Եւ ոմանք ասեն, թէ սեաւ մաղծն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն և խարտէշն՝ զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր և պալղամն՝ ծոյլ և **քնափ**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 245): Բառարանները չեն վկայում: Ունի՝ **քնկոտ** իմաստը:

ՔՈՒԷՍԵԱԼ - «Որպէս պղինձ գնդացեալ կամ **քուէացեալ**» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 476): Բառարանները վկայում են **քուէ**՝ *խորանարդ, զառ, վիճակ* իմաստով: Հավանաբար ունի **խորանարդված** իմաստը:

ՕԴԱՍԻՐՏՔ - «**օդասիրտք** և թանձրամիտք էին» (Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, էջ 166բ):

ՕՁԱՏԱՆՋ, ՕՁԱԽԱԲ, ՕՁԱՉԱՐՉԱՐ - Հին մատենագրության մեջ բազմաթիվ բառաբարդումներ են վկայված օծ բառով: Տաթևացին ավելացրել է այս երեք նորակազմությունը: Սրանցից միայն առաջինը բերում են ԱԲ-ն և Մալխասյանցը՝ *օծից տանջված* նշանակությամբ:

Տաթևացին հաճախ է դիմում նաև նոր բառածևեր կազմելու այնպիսի եղանակների, ինչպիսիք են ածանցումը կամ հակառակը՝ ածանցի կրճատումը և ածանցների փոխանցումը: Օրինակ՝ ընդունված *երկխօս, խօսնայր, գիջակն, կիսամաքուր, կիսասուրբ* ձևերից - ուրիւն ածանցով նա կազմում է **երկխօսութիւն, խօսնայրութիւն, գիջականութիւն, կիսամաքութիւն, կիսասրբութիւն** գոյականները: Ընդհակառակը՝ *անձնյարգութիւն, խստակրօնութիւն, ոտնակացութիւն* բառերը կիրառում է **անձնյարգու, խստակրօն, ոտնկաց** ձևերով. առաջինն իբրև հարադրության բաղադրիչ (անձնյարգու լինել), երկրորդը և երրորդը՝ իբրև

որոշիչներ (խստակրօն ճգնաւորութիւն, ոտնկաց վերծանութիւնք):

Կան նաև ածանցների փոխանցման դեպքեր. *բաջաղանք*-ի փոխարեն՝ **բաջաղմունք**, *ներհակաբար* և *ներհակապէս*, *բացատրապէս* ձևերի փոխարեն՝ **ներհակօրէն** և **բացատրաբար**: *Դանդաչել*, *բարբաջել* հոմանիշների շարքում բերում է նաև **ընդվայրաբանել** ձևը (բառարաններում նշվում են միայն *ընդվայրաբան*, *ընդվայրաբանութիւն* ձևերը):

Կան նորակազմություններ նաև կերտված ան-, գեր-, ընդ-, -բար, -պէս, -ակ և այլ ածանցներով.

**անխաղաղ** - «Ո՛վ **անխաղաղ** ակեացս» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան էջ 715): Բառարանները վկայում են միայն **անխաղաղութիւն** ձևը:

**գերատեղիս** - (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 712):

**խօսնայրութիւն**- Բառարանները բերում են *խօսանայր* ձևը և քանի որ *խօսնայր*-ը բացատրվում է՝ «փեսայ կուսի նշանելոյ» կամ՝ փեսացու, ակնհայտ է, որ բերվող **խօսանյութիւն**-ը հոմանիշ է հարսնախոսութեանը:

**համենատապէս** - (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 341):

**հայեակ** - չնայած ԱԲ-ն և Փեշտմալճեանի բառարանն ունեն **հայեկ** ձևը, սակայն տարբեր են թե՛ նրանց բացատրությունները և թե՛ բառերի հնչյունական կազմը. ըստ Փեշտմալճեանի՝ «հայեցարան, դիտարան», ըստ ԱԲ-ի՝ «նայելու տեղ, դիտանոց նաւու», այսինքն՝ երկուսի համար ընդհանուր է տեղ ցույց տալը, իսկ ըստ Տաթևացու՝ հայեակ կոչվում է դիտող, հսկող, նայող մարդը. «Եւ զի դէտ ես կացեալ, այսինքն հայեակ, պարտ է քեզ ստանալ զբազում

յատկութիւնս դիտին» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 182): Նմանօրինակ բացատրություն տալիս է միայն Մալխասյանցը (նայող, դէտ, տեսուչ):

**չգէտս** - (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 324): «Չայկազյան բառարանը» տալիս է *չգիտուն* ձևը:

**չուսանիլ** - (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 312):

**չեկեալն** - չժամանածը, տեղ չհասածը իմաստով (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 635):

**սաապէս**- «որք **սաապէս** են սովորեալք բանիւ ճախարակեայս յօրնել դրուատս» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 711):

**սոփերային** - «ոսկին **սոփերային** անպիտանացեալ» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 714): Բառարանները վկայում են «սոփերական» ձևը:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յր. Աճառեան, Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հ. Բ, Վենետիկ, 1926թ.:
2. Յր. Աճառչան, Հայերեն արմատական բառարան, 1-4, Երևան, 1942-62թթ.:
3. Երենիա Մեղրեցի, Բառգիրք հայոց (աշխատասիրությամբ՝ Յ. Ամալյանի), Երևան, 1975թ.:
4. Աւգերեան Մ., Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:
5. Խուդաբաշյան Ալ., Հայ-ռուսերեն բառարան, հ. Ա-Բ, Երևան, 1986-87:
6. Փէշտմալճեան Գր., Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Կ. Պօլիս, 1844-46:
7. Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1944-45:
8. Աւետիքեան Գ., Սիրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1-2, Երևան 1979-81:
9. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան 1950թ., էջ 567:

### ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՄՆԵՐ

1. Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն սաղմոսաց, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր հ. 5869:
2. Գրիգոր Տաթևացի, Լուծումն գրչութեան, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հ. 1115:
3. Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հ. 1264:
4. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պօլիս, 1729թ.:

5. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Չմերան, Կ. Պօլիս, 1740թ.:
6. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան, Կ. Պօլիս, 1741թ.:
7. Գրիգոր Տաթևացի, Լուծումն պարապմանց Կիրողի, Կ. Պօլիս, 1717թ.:
8. Գրիգոր Տաթևացի, Նորին Գրիգորի ներբողեան ողբերգաբար սգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յոհաննու Որոտնեցւոյ. աշխատասիրությամբ՝ Ս. Մ. Գրիգորյանի, Երևան, 2007թ.:

### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԲ - Առձեռն Բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:  
ՆՂԲ - Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837 (Երևան, 1979 - 1981):

Մուսանճա Մակարի Գրիգորյան

ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ 14-15-ՐԴ ԴԱՐԵՐԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՄԵՉ

(ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ)

Պատկեր՝ 215: Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>:

2.5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 500:

**«Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչություն**

Գինը՝ պայմանագրային: